ՆՈՐ-ԴԱՐ

№ 71 ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի 2 Մայիսի **1891** Հինգշաբթի 2 Մայիսի ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 71

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 ր., հատը՝ 5 կոպէկ։ Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով. Յայտարարութիւնների գինն 2 կ., ընկլամների համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հեռագիրներ։
Քրոնիկոն.—Լուրեր։
Թղթակցութիւններ— Նալթա։
Քաղաքական.—Քաղաքական լուրեր։
Խառն լուրեր։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.— 1 Մայիսի.— Պաշտօնական. ապրիլի 29-ին, երբ ռուսաց Թագաժառանգն անցնում էր Օտսու քաղաքով (Ճապոնիայում), ոստիկանական մի ստորին պաշտօնեայ սրով վիրաւորեց Նորին Բարձրութեան գլուխը։ Զարագործն երկրորդ անգամ կամեցաւ յարձակուել Նորին Բարձրութեան վրայ, բայց յունաց Գէորգ պրինցը ձեռնափայտով վայր գլորեց նրան։ Աստուծոյ ողորմածութեամբ, Թագաժառանգի վէրքը թեթև է և վտանգ չկայ։ Անձամբ Նորին Կայսերական Բարձրութիւնից ուղարկուած հեռագիրը վկայում է, որ Նորին Բարձրութիւնն առողջ է։ Թագաժառանգը չպառկեց և մտադիր է շարունակել ճանապարհորդութիւնն, առանց մարշրուտը փոխելու։

ՓԱՐԻԶ, 30 ապրիլի.—«Journal officiel»-ում տպուած է Հնդկա-Չինաստանի զեկուցումը ռուսաց Թագաժառանգի Սայգոն այցելելու մասին։ Նորին Բարձրութիւնն ընդունուած էր իրեն վայել պատւով և առանց կրճատումների ընդունեց ընդունելութիւնների ծրագիրը. պայմանաւորուած էր, որ ոչ մի ճառախօսութիւն չլինի։ Թագաժառանգի և յունաց պրինցի Սայգոն մուտ գործելը հանդիսաւոր էր. քաղաքը զարդարուած էր ռուսաց, ֆրանսիական և յունական գոյների դրօշակներով, և բնակիչները մեծ հիւրերին ցնծագին ցոյցեր էին անում։ Երեկոյեան հանդիսաւոր ճաշ էր տրուած, որի ժամանակ ընդհանուր-նահանգապետն առաջարկեց ռուսաց Թագաւոր Կայսրի և հելլենական Թագաւորի կենացը. ռուսաց Թագաժառանգը պատասխանեց ֆրանսիական հասարակապետութեան նախագահ Կարնոյի կենացով։ Նորին Բարձրութեան Սայգոնում գտնուած առաջին օրը կերոնահանդէս, լուսավառութիւն, թատրոնում ներկայացում և ընդհանուր-նահանգապետի այգիներում ժողովրդական զբօսանք եղաւ։ Նորին Բարձրութիւններին ամեն տեղ ժողովուրդը բացականչութիւններով էր ընդունում։ Հետևեալ օրը, կիրակի, ռուսաց Թագաժառանգը, պատարագից յետոյ, ներկայ էր զօրահանդէսին, երեկոյեան պարահանդէս կար։ Երկուշաբթի օրը Նորին Բարձրութիւնները ներկայ էին Շոլոնում չինական տօնախմբութեան, իսկ յետոյ Սայգոն վերադարձան և գնացին ձիարշաւ. երեկոյեան «Սոյբէ» շոգենաւի վրայ պարահանդէս կար։ Երեքշաբթի օրը ռուսաց Թագաժառանգը «Պամեատ Ազովա» նաւի վրայ ճաշ տուեց, այնուհետև ռուսաց նաւախումբը բաց թողեց խաբխաբ։ Թագաժառանգն, ըստ երևոյթին, գոհ մնաց ընդունելութիւնից, որ ցոյց տուեին նրան վարչական անձերն և բնակիչները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Հեծելազօրի և ինժեներային մասի ընդհանուր-տեսչի, նոյնպէս և ինժեներային մասի ընդհանուր տեսչի օգնականի կոչումները բարձւում են։ Հեծելազօրների ընդհանուր վարչութիւնը որոշւում է հետևակների հետ միանման հիմունքներով և կեդրոնանում է գլխաւոր շտաբի մէջ. իսկ ինժեներային գլխաւոր վարչութիւնը, որ գործունէութեան որոշ շրջանակով մնում է զինուորական մինիստրութեան կազմութեան մէջ, ենթարկւում է առանձին անձի՝ ինժեներների գլխաւոր կառավարչի կոչումով։

Ինժեներային մասի ընդհանուր-տեսչի օգնականի պաշտօնակատար գ՚ներալ Զաբոտկինը ինժեներների գլխաւոր կառավարչի պաշտօնակատար է նշանակուած։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 Մայիսի.— Պետական ազնուականների կալուածական բանկի գրաւաթղթերի այսօր կատարուած խաղարկութեան ժամանակ գլխաւոր գումարները հետևեալ տոմսերը տարան.

№ սերիայի	№ տոմսի	Տարած գումարը	№ սերիայի	№ տոմսի	Տարած գումարը
4497	8	200,000	1,688	16	1000-ական
9795	6	75,000	13,062	29	1000-ական
14,721	36	40,000	7,376	11	1000-ական
5,860	18	25,000	8,748	13	1000-ական
14,123	9	10,000	12,889	41	1000-ական
10,935	46	10,000	4,174	24	1000-ական
6,244	8	10,000	7,602	6	1000-ական
15,898	17	8,000-ական	1,629	15	1000-ական
867	42	8,000-ական	13,574	16	1000-ական
4,152	18	8,000-ական	1,556	39	1000-ական
256	33	8,000-ական	9,964	6	1000-ական
9,850	41	8,000-ական	14,878	39	1000-ական
4,209	41	5,000-ական	13,076	45	1000-ական
4,892	26	5,000-ական	7,055	14	1000-ական
2,762	14	5,000-ական	15,594	32	1000-ական
8,728	45	5,000-ական	15,454	30	1000-ական
2,312	45	5,000-ական	5,320	41	1000-ական
9,527	45	5,000-ական	9,644	40	1000-ական
8,560	14	5,000-ական	14,517	1	1000-ական
7,758	13	5,000-ական	2,331	40	1000-ական

ՔՐՈՆԻԿՈՆ

ՂԶԼԱՐԻՑ.—Ապրիլի 26-ին, երեկոյեան, ժամը 5-ին, այստեղ սաստիկ կարկուտ եկաւ, որպիսին տարիներ չէ եղած. Վնասուեցին բաւական շատ այգիներ. Վնասուած կարելի է հաշուել մինչև հինգ հազար տակառ գինի, որը վաճառողներին ենթարկուած Ղզլարի համար խիստ մեծ հարուած է. Եղանակը վատ է և դարձեալ սպառնում է մեզ։

ԲԱԼԱԽԱՆՈՒՑ.—Յայտնի է, որ Բալախանում բազմաթիւ հայ գործաւորներ և մշակներ կան, որոնք տարիների ընթացքում մնում են, մեծ մասամբ, առանց խոստովանութեան և հաղորդութեան։ Ապրիլի 1-ին, Նաւթահորերի տէր՝ օրիորդ Օլգա Ալէքսանդրովնա Բենկենդորֆի յատուկ հրաւիրանօք օրհնութեամբ Բաղուից Բալախանի գալով Դ. քահ. Տ.-Աստուածատրեանցը՝ այստեղի մշակ և գործաւոր դասակարգի մեծագոյն մասին խոստովանացրել և հաղորդել է։ Կրօնական այդ արարողութիւնը տեղի է ունեցել Բենկենդորֆի մի մեծ դահլիճում, որ կլուբի համար է շինուած և որը այդ օրերում յատկացրած էր ժամերգութեան համար։

Հայր Ղևոնդը երեք օր մնալով, ժամերգութիւնից յետոյ միշտ խօսում էր նրանց հետ, իսկ հաղորդութեան օրը յատուկ քարոզ խօսեց, բնաբան առնելով անառակի առակը։ Օլգա Ալէքսանդրովնան հայ գործաւորների և մշակների համար յատուկ հայ քահանայ է բերում և հաղորդել է տալիս, և քահանային երեք օր իւր ծախքով պահելուց և պատուելուց յետ, ամենայն յարգանքով ճանապարհ է դնում. մեր հայերն օտարից օրինակ առնելին այս դէպքում, վատ չէր լինի։

ՔԵՇԻՇՔԵԱՆԴ գիւղից.—Մեր հասարակութիւնը 1890 թ. հողաչափին և ուսեալքին 70 րուբլ. վճարելով, ամբողջ տարուայ ընթացքում չափել տուեց իւր հողերը։

Հողատէրերը, որոնք թէ զանազան անհիմն և զուր խնդիրներ առաջարկելով է, թէ սրան-նրան գրգռելով, ոչ մի հնարքով չկարողացան խանգարել հողաբաժանութիւնը. անցեալ փետրուարի 26-ին գիւղը, գողանալ տուեցին հողաչափի գիրքը՝ երբ, հողաբաժանութիւնն արդէն վերջանալու վրայ էր, որով և կորաւ 70 րուբլին և բոլոր հասարակութեան այդ ծախսի հետ ունեցած զրկուածների-աղքատների յոյսը հող ստանալու մասին։ Մինչև այժմ գողը չէ գտնուել։ Հասարակութիւնը սաստիկ յուզուած է և կամենում է նորից մի հողաչափ վարձել և հողը չափել տալ։ Եթէ հասարակութիւն. մինչև հողը մէկ էլ չափուի ու պրծնէ, ճարպիկ հողատէրերը մի հնարք էլ կը գտնեն։

ՔԱԹՈՒԿ գիւղից.—Ապրիլի 20-ից մինչև 21-ը չափազանց անձրև էր գալիս, այնպէս որ արդէն ծաղկած ծառերին շատ վնաս տուաւ. անձրևը յորդառատ լինելով, Դարգաու գետակը վարարեց և մի քանի այգիներ արմատահան անելով քշեց տարաւ։

—Ահա 25 օր է, գաւառապետը հրամայել է, որ ամեն գիւղից տնից մի մարդ դուրս գայ Դարգաու գետակի ափը մարախ կոտորելու. չնայելով, որ արդէն 38,000 պուդ կոտորուած է, բայց գետից մրջիւնի պէս չարունակ դուրս են գալիս և կարծես վերջ չունին. դա մի զարմանալի տեսարան է. մարդկային ոյժն անզօր է հակադրելու այդ փոքրիկ մրջիւնների դէմ, որոնք սփռւում են դաշտերում և տեղ-տեղ ոչնչացնում. Թէև ամեն օր հազարաւոր մարդիկ ցախերով, աւելներով, բահերով հասարակ կերպով չարունակ սատակեցնում են այդ թշնամի մրջիւններին, բայց իրենք էլ տեսնում են, որ այդ շատ քիչ օգուտ է բերում և յուսահատուած են։ 2 տարի է ահա, որ այդ սարսափելի թշնամին կատարում է իւր աւերմունքները և քիչ գիւղացիներ չկան, որոնք այդ իսկ պատճառով կատարելապէս աղքատացել են. մի քանի գիւղեր այն դրութեան են հասել, որ 2 տարի չորրորդ մինչև անգամ արքունական հարկերը չեն վճարել. Պէտք է ասած, որ մորեխն ամեն տեսակ բոյս ուտում է, բացի կործկից և խաշխաշից։

Մորեխի պակասը լրացրեց ապրիլի 22-ին եկած կարկուտը և այգիներին շատ վնաս տուաւ. Ասում են, որ Դզզալի կողմերը նոյնպէս կարկուտ է եկել, որ նոյնպէս այգիներն ու արտերը փչացրել է։

Ասում են, որ ապրիլի 29-ին վիճակիս առաջնորդը դուրս է գալու դէպի Արցախի գիւղերը ժողովրդին խրախուսելու քարոզներով։

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ.—Ապրիլի 7-ին տեղիս ռուս թատերասէրները, յօգուտ քաղաքային դպրոցի, ներկայացրին երեք փարս-վոդևիլներ, որոնք, մեր կարծիքով, աւելի յարմար էին ցիրկում կամ բալագանում ներկայացնելու, քան թատերական բեմի վրայ, այն էլ մի փոքրիկ գաւառական քաղաքում, և որոնցից չէ կարելի մի որ և է բարոյական դաս առնել։ Ցանկալի է, որ յարգելի ռուս թատերասէրներն ուշադրութիւն դարձնեն պիէսների բարոյականի վրայ, քանի որ իրենց ներկայացումներին յաճախող հասարակութեան մի մասը կազմում են տեղական հայերն, որոնց մի նշանաւոր կոմիտէն կանգնած է զարգացողութեան ստորին աստիճանի վրայ։

Առաջին վոդևիլից յետոյ մի միջնադէպք պատահեց. յանկարծակի թատրոնական բեմի դեկորացիաներից և կուլիսներից վառուեցրին «Հրդեհ» խօսքը սարսափ ձգեց թատրոնական դահլիճում գտնուող հանդիսականների, գլխաւորապէս կանանց վրայ. Բարեբաղդաբար հրդեհն իսկոյն հանգցրուեց, ամենայն եռանդով բեմը իսկոյն կանոնաւորուեց ու այնուհետև ներկայացումը շարունակուեց։ Մի նկատողութիւն ևս. ցանկալի է, որ մեր մէջ միշտ աչքի ընկնող մի քանի հերոսները ներկայացումների ժամանակ իրենց քաղաքավարի պահեն, ինչպէս վայել է մի որ և է հասարակութեան մէջ։ Ներկայացման միջոցներին այստեղ եկած մի ինչ-որ ձեռնածու ֆոկուսնիկ էր ցոյց տալիս։ Ի դէպ. այդ ձեռնածուն այստեղ երկու ներկայացում տուեց, որոնցից մէկի զուտ արդիւնքի կէսը յօգուտ քաղաքային դպրոցի էր, իսկ միւսի կէսը՝ յօգուտ Հայոց երկսեռ դպրոցների։

Բ-ից.— Ցուսալով երկաթ. վարչութեան այն նոր կարգադրութեան վրայ, որով եթէ լրագրութեան մէջ երկաթ. վարչութեան պաշտօնեաների դէմ արուած նկատողութիւնները նոյն լրագրութեան միջոցով չեն հերքւում, մեղաւոր ճանաչուածները պատասխանատուութեան են ենթարկւում,—առաջ եմ բերում մի քանի անկանոնութիւններ ու անկարգութիւններ, որոնց անձամբ ականատես ու ենթարկուած եմ եղել երկաթուղու ծառայողների վերին աստիճանի անտարբերութեան շնորհիւ.

Մեզանից ով որ ուշի ուշով զննել է կով. երկաթ. ստորին ծառայողներին, նա նկատած կը լինի, որ դրանք բոլորը կարծես թէ բաղդի բերմունքով են այդ պաշտօնին բարձրացած. վերցնենք, օրինակ, Բ. կայարանի ծառայողներին, որոնց բացի մէկից (որը դժբաղդաբար ներկայումս բացակայ է քաղաքից) ոչ տեղն է երկաթուղի գրասենեակը և ոչ պաշտօնը պէտք է նրանց լինի։ Ցիրաւի, միթէ այդ տգէտ ծառայողներ շնորհիւ չէ, որ համարեա ամեն օր տասնեակ մարդկերանց նեղութիւններ անկարգութիւններ են պատահում. մարդս անզգայ քար պէտք է լինի, որ կարողանայ տանել այդ անկարգութիւններն ու նեղութիւնները, որոնք ծառայողների տգիտութեան արդիւնք են և ուրիշ ոչինչ։ Մենք գրպարտութիւն արած կ՚լինէինք, եթէ այս ընդհանուր նկատողութիւնից յետոյ փաստերով չը հաստատէինք, (պատասխանատուութիւնն ինձ վրայ եմ ընդունում)։

Օրինակ՝ պատահում են շատ ժամանակ, որ փոստով ապրանք ես ստանում կով. երկաթ. որ և է կայարանից, վճարում ես վարձն ու ապրանքը ստանում. անցնում է մի քանի ժամանակ, ներկայանում ես կայարան մի ուրիշ ապրանք ստանալու. բայց դեռ դուռը նոր ես բանում ներս մտնում, երբ յանկարծ լսում ես՝ «ó, բարև էք եկել. անցեալ ամիս ստացած ապրանքի նեդորոը բերել էք»։ «Ինչ նեդորոյ, հարցնում ես զարմացած։»—Անցեալ անգամ Դորումը սխալուել են. ստացած ապրանքիդ՝ փոխանակ պուդին 20 կոպ.՝ նշանակել են 10 կոպ., ուստի դուք նորից վճարելու էք 20 րուբ.» և այլն։

Ինչ անէ ապրանքի տէրը. չը տալ չէ կարող, քանի որ միւս անդորրագիրը գանձապահի կասսիրի մօտ է, կամ այսօր պրծաւ, հօ վաղը վճարելու է։ Նա վճարում է։

Հիմա մտէք վաճառականի դրութեանը։ Նա 2 շաբաթ առաջ ապրանքն ստացել է ու պուդին 10 կոպ. վարձով հաշուել ու ծախել, կարծելով, թէ պուդին 5 կոպ. վաստակել է. բայց ինքը այսօր դեռ իւր գրպանից էլ դնում է վրան տալիս գանձապահին։

Այսպիսի դէպքեր օրական քանիսն են պատահում և քանի մարդիկ են անտեղ տեղից վնասներ քաշում. աւելի լաւ չէր լինիլ, որ հենց նոյն իսկ այդ անուշադիր ծառայողների վրայ հաշուէին այդպիսի բաց թողած գումարները, որպէս զի զգուշանան ու միւս անգամ հասարակութեան հետ կատակով չվարուեն։

Մի անյարմարութիւնն էլ այս է, որ այսօր Ս... ազգանունով մէկը ապրանք է ստանում. մի բոլորովին ուրիշ մարդ, բայց դարձեալ Ս... ազգանունով, ներկայանում է ապրանք ստանալու. և ահա վերջինիս յայտնում են, թէ անցեալ օրը կամ անցեալ շաբաթ նա էլի ապրանք է ստացած և այսքան նեդորոյ ունի. հազար անգամ բացատրիր, երդում կըրակն ընկիր, ասա, որ դու նրանց ասած Ս... չես և Ս... ազգանուններ շատ կան, բայց գանձապահը քեզ չի լսում, բաւական է, որ Ս... ես, պէտք է վճարես։ Այս անկարգութիւնն էլի ծագում է ծառայողների անտարբերութիւնից. ինչու առաջուայ մարդուց լիովին չ՚ստանալ, և ինչու մի Ս... մի ուրիշ Ս-ի տեղ տուժի։

Դիւել արդեօք երկրորդական դէպքերի մասին, որոնք ամենայաճախ կրկնուողներն են. Օր. ճանապարհում ես դիցուք հասարակ քար աղ. ճանապարհողը գործին անտեղեակ մի մարդ լինելով, չէ խմանում առաջինն, երկրորդ կարգը, կամ լիմոնի աղի ու հասարակ աղի վարձի տարբերութիւնը։ Դա պէտք է խմանայ և բացատրի ապրանք ընդունողը, անդորրագիր գրողը, վարձ հաշուողը. բայց դրանք, կարծես խօսքը մէկ արած, լսում

են, այդ մասին ոչինչ չեն ասում։ Բայց նում դրանք դիտմամբ են այդպես անում, թէ ծուլանում են իրենց պարտականութիւնը կատարելու։ միայն պէտք է ասած, որ այդ, ըստ երևութին, հասարակ բանից մի ահագին պատմութիւն է դուրս գալիս։ երբ ապրանքը ստանում են նշանակած կայարանում, զանազանը քեզ դիմում է հետևեալ խօսքերով. «Ռուվհետև գրած չէ, թէ աղը ինչ տեսակ է, ծովային թէ հասարակ, կամ թէ լիմոնի, այդ պատճառով վճարեցէք վերջինիս վարձն ու տարէք հաստատել տուէք, որ հասարակ աղ է եղած ու 2—3 ամսից յետոյ վարչութիւնից ձեր ուել տուած փողը ետ կ'ստանաք»։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵԱԼԹԱ, 24 ապրիլի.—Մի քանի օր չեմ ասում, այլ մի քանի ամիս է, որ մենք, Նալբայի հայերս, աղօթում ենք մեր սեպհական աղօթատան մէջ։ Փառք Աստուծոյ, որ մենք էլ հայ քրիստոնէի չարքը մտանք։ Նալբայի հայերը, որոնց թիւը զանազան ժամանակներում 200—300 և աւելի է լինում, բոլորն էլ գաղթականներ են Կովկասից, Թրքա և Պարսկա Հայաստանից։ Մինչև անցեալ տարուայ վերջը Նալբայի հայերս զուրկ էինք, չեմ ասում եկեղեցուց, մինչև անգամ աղօթատնից։ Երբեմն մեզ մօտ գալով Նպաստորևայից և Սիմֆերոպոլից հայ քահանաներ, եկեղեցական արարողութիւնները կատարում էին հիւրանոցներում վարձած սենեակներում, որոնք թանգութիւնից զատ աղօթելու համար ոչ մի յարմարութիւն չէին ունենում։ Արժ. Խորէն ծ. վ. Ստեփանէի հնորհիւ մենք ևս վերջապէս ունեցանք մեր սեպհական աղօթատունը։ Ռուսերէն ասում են՝ «Иметъ худо безъ добра»։ Սրանից 15 տարի առաջ Նալբայաբնակ պ. պ. Բերլինանց և Յ. Տէր-Սարգսեան մի քանի անձերի հետ հիմք են դնում «Նալբայի Հայոց հոգևոր ընկերութեան», որը հաստատում է Վեհափառ Կաթողիկոսից 1888 թ.։ Ընկերութիւնը նպատակ է ունենում օգնել կարելոյն չափ Նալբայի չքաւոր հայերին և գլխաւորապէս հիմնել հայադաւան հայերի համար մի աղօթատուն։ Սկզբում ընկերութեան գործերը լաւ են գնում և դրամագլուխը 2000 ր. անցնում է, սակայն վերջերումս ընկերութեան մէջ պաշտօնակատար մի քանի պարոններ իրենց վարմունքով զզուեցնելով բոլորին, ոչ ոք ընկերութեան մասին խօսել չէր ուզում, այնպէս որ նա տիպուած դադարեցրել էր իր գործունէութիւնը, իսկ ընկերութեան փողերի մնծագոյն մասը մնացած էր առանց չահեցնելու զանազան մարդկանց ձեռքում։ Անցեալ տարի Նալբայի հայերը երեսուն անձերի մասնագրութեամբ խնդիրք ուղարկելով հոգևոր կառավարութեան՝ խնդրեցին արժ. Խորէն ծ. վ. Ստեփանէին իբրև քննիչ ուղարկել ընկերութեան գործերը քննելու և նախագահի և միւս պաշտօնավար անձերի ընտրութիւն կատարելու համար, համոզուած լինելով, որ գերապատիւ հօրը կ'աջողուի կարգի բերելու ընկերութեան վերին աստիճանի կնճռուած գործերը։ Անցեալ տարի դեկտեմբերի 6-ին հայր Խորէնը եկաւ Նալբա հոգևոր կառավարութեան յանձնարարութեամբ և մնաց մեզ մօտ մինչև նոյն ամսի 17-ը։

Պատահած է ձեզ, ընթերցող, գործ ունենալ տէչ ամբոխի հետ, հասկացնել նրան մի ճշմարտութիւն, որը նրա հասկացողութիւնից վեր է, կամ ցոյց տալ նրա իրաւունքները և պարտականութիւնները։ Եթէ պատահած է, այն ժամանակ կ'հասկանաք հայր Խորէնի դերի դժուարութիւնը։ Բայց դժուարացաւ նա իրեն յանձնուած պաշտօնը կատարելու ժամանակ։ Ոչ։ Նալբայի հայերը, իբրև զաղթականներ զանազան երկրներից, միմեանցից զանազանւում են իրենց վարքով, բարքով, սովորութիւններով և զարգացողութեամբ։ Նալբայի հայերի մեծագոյն մասը (մօտ 200 հոգի) կազմում են բանուորները, իրենց ուստաբաշիով, երկրորդ տեղը բռնում են արհեստաւորները և յետոյ վաճառականները։ Ընտրութիւններից մի քանի օր առաջ դէպք ունեցանք խօսելու բանուորների հետ։ Գիտէք, ասում են, մեզ մօտ հայ վարդապետ է եկած մեր ընկերութեան նոր գլխաւորներ ընտրելու և բացի դրանից քարոզ պէտք է տայ այս ինչ տեղը. ուստի չմոռանաք գալու. ամէն տեղ պատասխան եմ տանում. «մենք ինչ գինանք, քո մատաղ, խարցուր մեր զըլխաւորից, խարցուր Մ աղայից (ովէ մեղաւորը այստեղ. ժողովուրդը, որ ոչ մի ժամանակ հայ քարոզիչ հոգևորական տեսած չէ. առանց տալու պահանջելն էլ մեղք է), ինչ որ կասեն անենք կանենք»։ Հիմա արի և տես, որ այդ գլխաւորը, այդ ազան իրենց զարգացողութեամբ և ամէն բանով չատ ցած են այդպիսի պատասխան տուող ժողովրդից, բայց մի ինչ-որ կերպով բռնանալով ոգէտ ամբոխի խղճի և կամքի վրայ, խաղալիք են դարձրած իրենց ձեռքում ժողովրդի մնծագոյն մասը։ Չնայելով, որ մի քանի անգամ եկած են մեզ մօտ քննիչներ, բայց խոչոմութիւնները գնալով աւելի սաստկացել են։ Վենց այդ խոչոմութիւնների պատճառով մինչև հայր Խորէնի գալը ընկերութիւնս ունէր միայն չորս անգամ, իսկ այժմ այդ թիւը հասնում է 58-ի։ Այդ ամէն անկարգութիւններին վերջ դնելու համար հարկաւոր էր մեզ մի հասկացող և աղդեցիկ անձ։ Նալբայի հասկացող դասակարդը, ինչպէս ասացինք, չսխալուեց հրաւիրելով հայր Խորէնին։ Գերապատիւ քննիչը իր այստեղ եղած ժամանակ անդադար գործում էր։ Դժուար չէր տեսնել, թէ ինչպէս նա բարոյապէս տանջւում էր, տեսնելով այն բոլոր անկարգութիւնները, որոնք բում և ամէն անգամ աղօթատունը լիքն էր ժողովրդով։

Գուցէ և ս. Խորէնը, իբրև քննիչ ուսնեցաւ իր պակասութիւնները, այնուամենայնիւ Նալբայի հայերի մեծագոյն և հասկացող մասը բոլորովին գնահատում է գերապատիւ հօր արած ծառայութիւնը։

Նալբայի հայերը կամենալով յայտնել ս. Խորէնին իրենց սէրը և յարգանքը, ժողովեցին 65 ր., որով կամենում էին, իբրև յիշատակ, մի ընծայ տալ նրան. սակայն խնայելով ժողովրդեան դիտաւորութիւնը նա մերժեց բոլորովին ընդունել մի որ և իցէ ընծայ։ Վերջը զիջանելով ժողովրդեան թախանձանքին ընդունեց 15 ր. մի փոքրիկ ընծայ, իսկ 50 ր. ս. Խորէնի ցանկութեան համաձայն գործադրուեց բարեգործական նպատակով։ Ապրիլի 21-ին Նալբայի հայերը ս. Խորէնին հետևեալ հեռագիրը ուղարկեցին. «Նալբայի հայ հասարակութիւնը չնորհաւորում է Ձեզ Քրիստոսի Յարութիւնը։ Նա Ձեր հիմնած աղօթատան մէջ աղօթում է Ձեր կեանքի համար»։ Միևնոյն բովանդակութեամբ մի չնորհաւորութեան հեռագիր այստեղից ուղարկուեց ս. Խորէնին փետրուարի 27-ին։

Վերջացնելով նամակս, պէտք է ասենք, որ չնորհակալութեան արժանի է նոր-Նախիջևանցի Աեծ. պ. Ղ. Տրապիզոնցեանը, որ ընտրութիւնների ժամանակ Նալբա գնալով գործով, բարի օրինակ էր տուած տեղիս հայերի համար։ Յարգելի պարոնը բացի նրանից, որ իւր հաչուով «Ֆրանսիա» հիւրանոցում մեր արժ. քննիչի համար առանձին սենեակ էր վարձած, նուիրեց նաև մեր ընկերութեան հարիւր րուբլի։

* * *

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—Մայրաքաղաքի թերթերին հետագրում են, որ ապրիլի 25 ին Պետերբուրգ է դնացել Վարչաւի ընդհանուր-նահանգապետ Գուրկոն։

—Հասարակական բարոյականութեան դէմ գործելուն համար մեղադրուող անգլիական պատգամաւոր Վէրնին մի տարի բանտարկութեան է ենթարկուած։

—Աւստրա-գերմանական առևտրական դաշնագիրը հաստատուած է 12 տարով սկսած 1892 թուի փետրուարի 3-ից։

—Ապրիլի 13-ին Պարիզի Բերրի փողոցում մարկիզ դը-Տրևիզի տունը պայթուցիկ նիւթով փորձ արին օդը ցնդելու և չնայելով, որ ցնցումն խիստ ուժգին էր, բայց տունը ամբոր չինուած լինելով, պատերն են միայն փոքր ինչ ճաքճքել, մինչդեռ հարևան տների պատուհանների բոլոր ապակիները ջարդուած են։

—Վերջին համեմատաբար կարճ ժամանակում իրար ետևից երկու միջնադէպ եղաւ ռուսաց ազատականների նաւերը Դարդանելից անցնելիս։ Մի քանի չաբաթ առաջ թուրք կառավարութիւնը բռնել էր այստեղ «Նիժնիյ-Նովգորոդ» նաւը, որ գինուորներ ու բանուորներ էր տանում Սիբիրի երկաթուղու չինութեան համար։ Կ. Պոլսի ռուսաց դեսպան Նելիդովի յայտարարի չնորհիւ այդ նաւն ազատ թողուեց։ Այս օրերս էլ ռուսաց «Կոստրոմա» նաւը բռնուեց Կաւակում (Բոսֆորի վրայ)։ Դրա վրայ նոյնպէս բանուորներ էին ուղևորում։ Այս անգամ Նելիդովը պահանջեց, որ նաւը բռնելու համար թուրք կառավարութիւնը 1000 ֆունտ տար։ Հաւատացէք, Կաւակի թուրք զառապետին արձակել իր պաշտօնից և ճանաչէ ռուսաց առևտրական դրօշակիր նաւերի անպայման իրաւունքը ազատ երթևեկութիւն ունենալու նեղուցներում։

—Մանիպալբի սահմանագլխից հեռագրում են, թէ մանիպալցիք պատրաստում են մի վճռական ճակատամարտ մղել անգլիական զօրքերի դէմ, և 30 հազար զօրք են հաւաքել Կոհիմայի ճանապարհի վրայ, երկաթ թնդանօթով։

—Վիեննայի «Presse» լրագիրը հաղորդում է, թէ սերբիական կառավարութիւնն և ինամակալներն, ըստ երևութին, յոյս չունեն, որ Նատալիա թագուհին կը հեռանայ Սերբիայից։ Ինչպէս լսում է, Ռուսիան սերբիական կառավարութեանը յայտնել է, թէ ցանկալի չէ, որ սերբիական կառավարութիւնը բռնի միջոցներ գործ դնէ թագաւորի մօր դէմ, և ուստի խոհեմութիւն կը լինի թագուհուն թողնել որ Բելգրադում մնայ, մանաւանդ որ նրա ներկայութիւնը դժուար թէ մի որ և է քաղաքական ծանր դէպքեր առաջացնէ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մի պարոն ծառայի ձեռքով իւր ծանօթ մի տիկնոջ համար վանդակի մէջ փակած երկու դեղձանիկ է նուէր ուղարկում և միևնոյն ժամանակ այդ տիկնոջը յանձնելու համար ծառային մի նամակ է տալիս, որի մէջ գրուում է, թէ նրան երկու դեղձանիկ է ուղարկուում. Ձանապարհին, ինչպէս է լինում, դեղձանիկներից մինը վանդակից դուրս է թռչում։ Ծառան այդ յետոյ է նկատում և ինչքան դէս-դէն է նայում, չի գտնում։ Ձարահատեալ մի հատ դեղձանիկն է տանում տիկնոջը յանձնելու։ Տիկինը բաց է անում նամակը և կարդում է։

—Դուս մի դեղձանիկ ևս բերել,—ասում է նա ծառային,—այս նամակի մէջ մի ուրիշն էլ կայ։

—Ա՛յ, անպիտանը նամակի մէջ է մտել,—ուրախացած բացականչում է ծառան,—իսկ ես կարծում էի, թէ թռուել կորել է։

* * *

Երեք տիկին խիստ տաք-տաք վիճաբանում են իրար հետ, թէ երեքից ո՛ւմ ձեռքն աւելի քնքոյշ, փափուկ, սպիտակ, մի խօսքով լաւ են։ Ի հարկէ, ամէն մինն ասում է, որ իւր ձեռքերն են լաւը և ուստի ոչ մի հետևանքի չեն հասնում։ Այդ միջոցին մտնում է մի ծանօթ պարոն, որին և ձեռքերի համար վիճաբանող տիկինները դատաւոր են կարգում։ Պարոնը չատ անհամ դրութեան մէջ է մնում։ Նա երկար ու բարակ դիտում է իւրաքանչիւրի ձեռքը և երկար ժամանակ չի իմանում ինչ պատասխանէ։

—Հիմա դժուար է որոշել, տիկիններ, թէ ձեզանից ո՛րի ձեռքն է լաւը,—վերջապէս պատասխանում է նա,—այդ բարեգործութիւն անելիս կարելի է որոշել, ում ձեռքը չատ կը տայ, նրա ձեռքն էլ ամենից լաւը կը լինի։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՇՈՓԵՆԱՒԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

I Սև ծովի վրայ

Բաթումից գնում են՝

Հինգշաբթի՝ երեկոյեան 4 ժամին ուղիղ գծով, Նովոռոսսիյսկ և Սուխում,

Շաբաթ՝ երեկոյեան 8 ժամին, ուղիղ գծով, բոլոր նաւահանգիստներով,

Երկուշաբթի՝ երեկոյեան 7 ժ. արտաոահմանեան նաւահանգիստներով, Կ. Պոլիս։

Բաթումում գալիս են

Երեքշաբթի՝ կէս օրին մօտ, Օդեսայից, ուղիղ գծով,

Ուրբաթ՝ առաւօտեան Օդեսայից ուղիղ գծով, Կերչի և Նովոռոսիյսկի վրայով։

Կիրակի՝ առաւօտեան Կ. Պոլսից,

Փոթիից Բաթում գնում են,

Հինգշաբթի՝ առաւօտեան ժ. 9-ին

Շաբաթ՝ առաւօտեան ժ. 9-ին,

Երեքշաբթի՝ երեկոյեան,

Փոթիից Բաթում գալիս են՝

Ուրբաթ և կիրակի կէս օրից յետոյ ժ. 2-ի մօտերքը։

ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

I Անդրկովկասեան երկաթուղի

Գնացքը Թիֆլիս գալիս է

Բաթումից, պոստ. 11 ժ. 8ր. եր.
Բագուից, « 7 ժ. 40 ր. առ.
Բաթումից, մար. ապ. 8 ժ. — ր. առ.
Գանձակից, » 8 ժ. 20 ր. եր.

Գնացքը Թիֆլիսից գնում է

Բաթում, պոստային. 8 ժ. 40 ր. առ.
Բագու, » 12 ժ. 8 ր. ից.
Բաթում, մար. ապ. գն. 3 ժ. 10 ր. ց.
Գանձակ, « ժ. 45 ր. առ.

II Անդրկասպեան երկաթուղի

Ուզուն-Ադայից գնում է 6 ժ. 40 ր. եր.
Ուզուն-Ադա գալիս է 7 ժ. 48 ր. առ.
Ուզուն-Ադայից գնացքը գնում է և գալիս երեքշաբթի և չաբաթ օրերը։
Սամարղանդ գնացքը գալիս է և գնում է ուրբաթ և երեքշաբթի օրերը։

I Բօստով-Վլադիկաւկազի երկաթ.

Վլադիկաւկազից գնում է 9 ժ. 30 ր. առ.
Բոստով գալիս է 8 ժ. 48 ր. առ.
Բոստովից գնում է 7 ժ. 28 ր. ցե.

ՊՈՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍԻ ԵՒ ՎԼԱԴԻԿԱՒԿԱԶԻ ՄԻՋԵՒ

Թիֆլիսից գնում է Վլադիկաւկազ

Ա. Հինգ հոգու տեղ ունեցող կառք. (կարէտ) առաւօտեան ժամը 9-ին, գիշերում է Մլէթում և միւս օրը երեկոյեան ժամը 8-ին հասնում Վլադիկաւկազ։

Բ. Վեց հոգու տեղ ունեցող (օմնիբուս) երեկոյեան ժամը 3-ին և առանց ճանապարհին դիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում Վլադիկաւկազ։

Վլադիկաւկազից Թիֆ. գալիս է.

Ա. Հինգ հոգու տեղ ունեցող կառքը (կարէտ) առաւօտեան ժամը 9-ին և գիշերելով Մլէթ կայարանում, միւս օրը երեկոյեան ժամը 8-ին հասնում է Թիֆլիս։

Բ. Վեց հոգու տեղ ունեցող կառքը (օմնիբուս) երեկոյեան ժամը 3-ին և առանց ճանապարհին դիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում Վլադիկաւկազ։

ԱՅՑԵԼԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՋԳՈՒՇԱՑԻՔ ԿԵՂԾԻՔԻՑ
ատոզջապահիկն
ԲՈՐԱԿԱ-ՏԻՄՈՒԼԵԱՆ ՕՃԱՌ

Գրուիզոր Գ. Փ. Իւրգինան և Գործ է ածւում այրուածքի, ելուն դի, պիսակի, դեղին բծերիս Քրանելու դէմ։ Առաջարկւում է ինչպէս ամենաբարձր յատկութեան արդուզարդի անուշահոտ օճառ։ Վաճառւում է Ռուսիայի ամենալաւ դեղատներում և դեղավաճառների մօտ։

Մէկ հատի գինն է 50 կոպ., 1/2 ն ո ր ք ը—30 կոպէկ։

Գլխաւոր պահեստը Մոսկուայում, Կ. Ի. Ֆերբէյնի մօտ Թիֆլիսում Կովկասեան ընկ. դեղ. ապր. պահեստում, Ծուբլինովի, Պոպովի և Ազմուքի մօտ

(M.) 10—10

ՍԱՆՏԱԼ ՄԻԴԻ
(SANTAL MIDY)

Պարիզի դեղագործի պատրաստած—թոյլատրուած է Ռուսիայում։

Այս կապսիւլների մէջ պարունակւում են ֆոթոք սոնդալէ MIDY

Կոմէնդիա։
Պահեստն է Ռուսիայի գլխաւոր դեղատներում։

(M.) 14—6

Дозволено цензурою. Тифлисъ, 1-го Мая 1891 г. Տպարան Կաւկազ լրագրի գրասենեակի Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр, д. Читахова